



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 7 ԱՌԻԴԻՏ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ

Քննաթերթ - պատասխաններ

Խնդիր 1	30 միավոր
Խնդիր 2	20 միավոր
Խնդիր 3	30 միավոր
Խնդիր 4	10 միավոր
Խնդիր 5	10 միավոր
Ընդամենը	100 միավոր

Խնդիր 1

Գնահատման ուղեցույց — Միավորներ

ա) Աուդիտի պլանավորման օգուտները

- Համապատասխան ուշադրության կենտրոնացում կարևոր ոլորտների վրա — 1
- Պոտենցիալ խնդիրների/ռիսկերի ժամանակին բացահայտում և լուծում — 1
- Աշխատանքների արդյունավետ կատարում — 1
- Աջակցություն համապատասխան ունակություն ունեցող աուդիտորական թիմի ընտրությանը և աշխատանքների բաշխմանը — 1
- Թիմի ուղղորդման, վերահսկման և վերանայման հեշտացում — 1
- Աջակցություն փորձագետների կողմից կատարված աշխատանքների համակարգմանը — 1

Առավելագույնը — 4 միավոր

բ) Աուդիտորական ռիսկեր և արձագանքներ (պահանջվում է ընդամենը 8-ը)

- Աուդիտորական ընկերության համար նոր հաճախորդ լինելու ռիսկ — 2
- Խարդախության ռիսկ (ԱՄՍ 240) տնօրենների պարզեցվածքների շահույթ մինչև հարկումը ցուցանիշից կախված լինելու պատճառով — 2
- Կանխավճարի ճանաչման և հասույթի գերազնահատման ռիսկ — 2
- Պաշարների առկայության ռիսկ պայմանավորված աուդիտորական թիմի անավարտ արտադրության բոլոր գույքագրումներին չմասնակցելով — 2
- Պարտավորությունների և ծախսերի թերազնահատման ռիսկ պայմանավորված երաշխիքային պահուստի նվազեցումամբ — 2
- Հետազոտության և մշակման ծախսերի հաշվառման մոտեցում — 2
- Հիմնական միջոցների գծով կանխաճարների արժեզրկման ռիսկ — 2
- Բաժնետոմսերի արտոնյալ թողարկում — 2
- Աշխատավարձի հաշվարկման գործառույթի պատվիրակում արտաքին կազմակերպությանը — 2
- Տնօրենների վարձատրության ոչ ամբողջական բացահայտում — 2

Առավելագույնը — 16 միավոր

գ) Համապարփակ ընթացակարգեր տնօրենների պարզեցվածքների գծով

- 1-ական միավոր յուրաքանչյուր լավ նկարագրված ընթացակարգի համար — 5

Առավելագույնը — 5 միավոր

դ) Պաշտպանական միջոցներ (Շահերի բախման կառավարում)

- 1-ական միավոր յուրաքանչյուր լավ բացատրված կետի/միջոցառման համար — 5

Առավելագույնը — 5 միավոր

Ընդամենը առավելագույնը — 30 միավոր

ա) Աուդիտի պլանավորումը կարգավորվում է ԱՄՍ 300 «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորում» ստանդարտով: Այն սահմանում է, որ պատշաճ պլանավորումը մի քանի ձևով օգտակար է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար.

- Օգնում է աուդիտորին պատշաճ ուշադրություն դարձնել աուդիտի կարևոր ոլորտներին:
- Օգնում է աուդիտորին ժամանակին բացահայտել և լուծել պոտենցիալ խնդիրները:
- Օգնում է աուդիտորին պատշաճ կերպով կազմակերպել և կառավարել աուդիտորական առաջադրանքը, որպեսզի այն իրականացվի արդյունավետ և օպտիմալ ձևով:
- Աջակցում է համապատասխան կարողություններով ու հմտություններով օժտված առաջադրանքի թիմի անդամների ընտրությանը՝ սպասվող ռիսկերին արձագանքելու համար, և նրանց միջև աշխատանքի պատշաճ բաշխմանը:
- Հեշտացնում է առաջադրանքի թիմի անդամների ուղղորդումը, վերահսկումը և նրանց կատարած աշխատանքի վերանայումը :
- Անհրաժեշտության դեպքում աջակցում է փորձագետների կողմից կատարված աշխատանքների համակարգմանը:

բ) Ռիսկեր և արձագանքներ

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն նոր հաճախորդ է «Մուռանո»-ի համար: Քանի որ աուդիտորական թիմը ծանոթ չէ «Հուսալի շինարար» ՍՊԸ -ի ներքին հսկողության միջավայրին, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը, գործարքներին և մոացորդներին, աուդիտի ընթացքում առկա կլինի խեղաթյուրումների չհայտնաբերման բարձր ռիսկ: Բացի այդ,	«Մուռանո»-ն պետք է ապահովի, որ աուդիտի համար նշանակվի համապատասխան փորձառություն ունեցող թիմ, և որ թիմի անդամներին տրամադրվի բավարար ժամանակ՝ ընկերության և էական խեղաթյուրման ռիսկերի մասին պատկերացում կազմելու համար, ներառյալ՝ թիմի մանրամասն հրահանգավորումը՝ ռիսկի հիմնական ոլորտները ծածկելու նպատակով:

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
սկզբնական մնացորդների վերաբերյալ առկա է ավելի քիչ հավաստիացում, քանի որ «Մուռանո»-ն նախորդ տարի չի իրականացրել աուդիտը:	
Տնօրեններին վճարվում է պարգևավճար՝ հիմնված տարվա շահույթ մինչև շահութահարկով հարկումը ցուցանիշի որոշակի տոկոսի վրա: Առկա է ռիսկ, որ տնօրենները կփորձեն գերազնահատել շահույթը և, հետևաբար, իրենց պարգևավճարները՝ մեծացնելով գրանցված հասույթն ու եկամուտները և նվազեցնելով ծախսերը: Սա առանձնահատուկ ռիսկ է դատողություններ ենթադրող բնագավառների համար, ինչպիսիք են պահուստները և հաշվապահական գնահատումները:	Աուդիտորական թիմը պետք է գիտակցի խեղաթյուրման բարձր ռիսկերը և նշանակի աուդիտի ավելի փորձառու անդամների՝ էական գնահատումների և դատողությունների ստուգման համար: Բացի այդ, թիմի անդամներին պետք է տրամադրվի բավարար ժամանակ՝ ընկերության և շահույթի գերազնահատման էական ռիսկերի մասին պատկերացում կազմելու համար Թիմը պետք է պահպանի մասնագիտական կասկածամտություն և պատրաստ լինի խեղաթյուրման բարձրացված ռիսկին: Պետք է իրականացվի ընդլայնված թեստավորում՝ կապված ճշգրտող հաշվապահական գրառումների հետ
Հաճախորդները լողավազանների գնման պայմանագրի ստորագրման պահին վճարում են 25% կանխավճար: Կանխավճարները չպետք է անմիջապես ճանաչվեն որպես հասույթ. դրա փոխարեն դրանք պետք է ճանաչվեն որպես հետաձգված եկամուտ (պայմանագրային պարտավորություններ) պարտավորությունների կազմում, մինչև որ պայմանագրի համաձայն կատարողական պարտականությունները չբավարարվեն: Դա, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա ժամանակի որոշակի պահին, երբ լողավազանի նկատմամբ	Աուդիտորական թիմը պետք է ստանա հաճախորդների հետ կնքված պայմանագրերի պատճենները և վերանայի դրանք՝ կատարողական պարտականությունները հասկանալու համար: Նրանք պետք է քննարկեն ղեկավարության հետ այն չափանիշները, որոնցով որոշվում է՝ արդյոք կատարողական պարտականությունները բավարարվել են, և ստացված կանխավճարների հաշվառման մոտեցումը՝ համոզվելու համար, որ այն տեղին է և համապատասխանում է համապատասխան ստանդարտներին: Վերջնական աուդիտի ընթացքում աուդիտորական թիմը պետք է

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Առկա է ռիսկ, որ հասույթը կգերազնահատվի, իսկ պարտավորությունները կթերազնահատվեն, եթե կանխավճարները գրանցված լինեն հասույթի կազմում:	իրականացնի հասույթի ժամանակաշրջանների տարանջատման և պայմանագրային պարտավորությունների, ամբողջականության ընդլայնված թեստավորում:
Աուդիտորական թիմը կմասնակցի 20 օբյեկտներից միայն վեցի անավարտ արտադրության գույքագրումներին : Անավարտ արտադրությունը հանդիսանում է էական հոդված և դատողություններ ենթադրող բնագավառ: Քանի որ աուդիտորական թիմը ներկա չի լինելու բոլոր օբյեկտներում, չհայտնաբերման ռիսկը մեծանում է, քանի որ թիմն ի վիճակի չի լինի ուղղակիորեն ձեռք բերել անավարտ արտադրությանն առնչվող ապացույցներ:	Աուդիտորը պետք է գնահատի, թե պաշարների որ գույքագրումներին է թիմը մասնակցելու. ամենայն հավանականությամբ դրանք կլինեն այն օբյեկտները, որոնք ունեն անավարտ արտադրության ամենաէական մնացորդները կամ գնահատվել են որպես խեղաթյուրման ամենամեծ ռիսկ պարունակող: Այն գույքագրումների համար, որոնց թիմը չի մասնակցելու, աուդիտորական թիմը պետք է ձեռք բերի և վերանայի գույքագրմանն առնչվող վերահսկողության ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը: Ինչպես նաև թիմը պետք է վերանայի անավարտ արտադրության գնահատման համար օգտագործված փորձագետի հաշվետվությունները, գնահատի գույքագրման ժամանակ նկատված ցանկացած շեղումները և ղեկավարության հետ քննարկի գույքագրման ընթացքում առաջացած խնդիրները
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն իր հաճախորդներին առաջարկում է 3 տարվա երաշխիք՝ առանց հավելյալ վճարի: Պահուստը հաշվարկվել է ընթացիկ տարվա հասույթի 1.5%-ի չափով՝ նախորդ տարվա 4.5%-ի փոխարեն, չնայած այն հանգամանքին,	Աուդիտորական թիմը պետք է ղեկավարության հետ քննարկի պահուստի հաշվարկման հիմքը և համեմատի այն ոլորտի միջին ցուցանիշների ու հաճախորդների կողմից տարեվերջից հետո ներկայացված հայցերի (եթե այդպիսիք կան)

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
որ շինարարական տեխնիկայի կամ ներկայացված հայցերի)մակարդակի փոփոխություն տեղի չի ունեցել: Համաձայն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի՝ սա պետք է ճանաչվի որպես երաշխիքային պահուստ: Երաշխիքային պահուստների հաշվարկը պահանջում է մասնագիտական դատողություն, քանի որ այն անորոշ գումար է: Առկա է ռիսկ, որ երաշխիքային պահուստը կարող է թերագնահատվել՝ հանգեցնելով ծախսերի և պարտավորությունների թերագնահատմանը:	մակարդակի հետ: Մասնավորապես, նրանք պետք է քննարկեն այս տարի պահուստի մակարդակի նվազեցման հիմնավորումը (տրամաբանությունը): Աուդիտորական թիմը պետք է նաև համեմատի նախորդ տարվա պահուստը տարվա ընթացքում փաստացի ներկայացված հայցերի մակարդակի հետ՝ գնահատելու համար ղեկավարության կողմից կատարված դատողությունների ողջամտությունը:
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն շահույթում կամ վնասում ճանաչել է 30 միլիոն դրամի հետազոտության ծախսեր, իսկ մնացած 60 միլիոն դրամը կապիտալացրել է որպես մշակման ծախսումներ: ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտը սահմանում է խիստ չափանիշներ այն մասին, թե որ ծախսումները կարող են կապիտալացվել որպես մշակման ծախսումներ: Առկա է ռիսկ, որ ստանդարտի պահանջները ճիշտ չեն կիրառվել: Եթե հետազոտության ծախսերը սխալմամբ դասակարգվել են որպես մշակման ծախսումներ, ապա ռիսկ կա, որ ոչ նյութական ակտիվները կգերագնահատվեն, իսկ հետազոտության ծախսերը կթերագնահատվեն:	Աուդիտորական թիմը պետք է ստանա շահույթում կամ վնասում ճանաչված հետազոտության ծախսերի և կապիտալացված մշակման ծախսումների բացվածքը ու վերանայի հիմնավորող փաստաթղթերը՝ որոշելու համար, թե արդյոք դրանք ճիշտ են դասակարգվել: Այնուհետև պետք է հավաստիանալ, որ մշակման ցանկացած ծախսում համապատասխանում է ՀՀՄՍ 38-ով սահմանված կապիտալացման վերաբերելի չափանիշներին: Թիմը պետք է նաև քննարկի հաշվապահական հաշվառման մոտեցումը ֆինանսական տնօրենի հետ և համոզվի, որ այն համապատասխանում է ՀՀՄՍ 38-ի պահանջներին:
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն պատվիրել է 120 միլիոն դրամի մեքենա-սարքավորումներ՝ կանխավճար վճարելով 50 միլիոն դրամ: Մեքենա-	վերանայել ոչ ընթացիկ ակտիվների ռեեստրը՝ որոշելու համար, թե արդյոք վճարված 50 միլիոն դրամի կանխավճարը կապիտալացվել է: Ղեկավարության հետ

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
սարքավորումները պետք է ստացվեին հուլիսին, սակայն այժմ դրանք կմատակարարվեն տարեվերջից հետո: Որպես հիմնական միջոցներ պետք է կապիտալացվեն միայն այն ակտիվները, որոնք տարեվերջի դրությամբ ֆիզիկապես գոյություն ունեն: Կանխավճար վճարված 50 միլիոն դրամը պետք է ճանաչվի որպես տրված կանխավճար: Եթե 50 միլիոն դրամի կանխավճարը կապիտալացվել է ՀՄ-ների կազմում, ապա տրված կանխավճարները կլինեն թերագնահատված, իսկ ՀՄ-ները՝ գերագնահատված: Ինչպես նաև տրված կանխավճարները կարող են արժեզրկման հայտանիշ ունենալ մատակարարի հետ առկա խնդիրների պատճառով:	քննարկել հաշվառման ճիշտ մոտեցումը՝ հաստատելու համար, որ կանխավճար վճարված գումարը ճանաչված է որպես տրված կանխավճար, և սխալ ճանաչված լինելու դեպքում՝ վերանայել ճշգրտող հաշվապահական ձևակերպումը: Ուսումնասիրել մատակարարի հետ ուշացման փաստաթղթերը առկայության դեպքում, ղեկավարության հետ քննարկել կանխավճարների արժեզրկման հնարավոր սցենարները:
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ն տարվա ընթացքում իրականացրել է բաժնետոմսերի արտոնյալ թողարկում : Սա ոչ ստանդարտ գործարք է, և առկա է ռիսկ, որ թողարկումը ճիշտ չի գրանցվել: Բաժնետոմսերի արտոնյալ թողարկումն իրականացվել է հավելավճարով, հետևաբար պահանջվում է այն բաժանել բաժնետիրական կապիտալի և բաժնետոմսերի հավելավճարի տարրերի: Առկա է ռիսկ, որ բաժնետիրական կապիտալի և բաժնետոմսերի հավելավճարի (share premium) միջև բաշխումը ճիշտ չի հաշվառվել, և այդ մնացորդները խեղաթյուրված են: Գոյություն ունի նաև ռիսկ, որ բաժնետոմսերի արտոնյալ թողարկումը չի բացահայտվել հաշվապահական հաշվառման ստանդարտների և	Աուդիտորական թիմը պետք է ձեռք բերի բաժնետոմսերի արտոնյալ թողարկումը հիմնավորող իրավական փաստաթղթերը՝ թողարկված բաժնետոմսերի քանակի և արտոնյալ գնի հետ համադրելու համար: Նրանք պետք է վերահաշվարկեն բաժնետիրական կապիտալի և բաժնետոմսերի հավելավճարի բաշխումը ու համաձայնեցնեն այն արտոնյալ թողարկումը գրանցող հաշվապահական ձևակերպման հետ: Աուդիտորական թիմը պետք է նաև հաստատի, որ ֆինանսական հաշվետվություններում արված բացահայտումները համարժեք են և համապատասխանում են ստանդարտներին ու օրենսդրությանը:

Աուդիտորական ռիսկ	Աուդիտորի արձագանքը
օրենսդրության պահանջներին համապատասխան:	
«Հուսալի շինարար» ՍՊԸ-ի աշխատավարձի հաշվարկման գործառույթը պատվիրակված է արտաքին սպասարկող կազմակերպությանը: Առաջանում է չհայտնաբերման ռիսկ առ այն, թե արդյոք «Հուսալի շինարար» ՍՊԸ-ում առկա են բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ տարեվերջի դրությամբ աշխատավարձի հաշվարկի բոլոր փուլերի և պարտավորությունների նկատմամբ վերահսկողության ընթացակարգերի ամբողջականությունն ու ճշգրտությունը հաստատելու համար: Պետք է հաշվի առնել սպասարկող կազմակերպությունում ներդրված վերահսկողության մակարդակը և այն, թե արդյոք տվյալները արժանահավատ են: Եթե որևէ սխալ տեղի ունեցած լինի, դա կարող է հանգեցնել աշխատավարձի գծով ծախսերի և համապատասխան հաշվեգրումների խեղաթյուրմանը:	Ղեկավարության հետ քննարկել նախորդ տարվա աուդիտից հետո «Հուսալի շինարար» ՍՊԸ-ում պահպանվող ձևակերպումների (փաստաթղթերի) ծավալի ցանկացած փոփոխություն, ինչպես նաև ղեկավարության կողմից աշխատավարձի նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացակարգերի մշտադիտարկում: Պետք է դիտարկել սպասարկող կազմակերպության հետ կապ հաստատելու հնարավորությունը՝ ներդրված վերահսկողության մակարդակը հաստատելու համար: Դիտարկել, թե որքանով է հնարավոր ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ «Հուսալի շինարար» ՍՊԸ-ում պահվող ձևակերպումներից՝ աշխատավարձի գծով ծախսերի և պարտավորությունների վերաբերյալ:
Տնօրենների վարձատրության վերաբերյալ բացահայտումները կատարվել են ոչ ամբողջապես ՖՀՄՍ-երին համապատասխան: Տնօրենների վարձատրության բացահայտումը ամբողջական չի լինի, եթե այդ հավելյալ տեղեկատվությունը չբացահայտվի:	Այս հարցը քննարկել ղեկավարության հետ և աուդիտի թիմի ներսում քննարկել՝ որոշելու համար, թե որքան առանցքային և էական է ՖՀՄՍ-երի համապատասխան պահանջների չպահպանումը:

գ) Համապարփակ ընթացակարգեր տնօրենների պարգևավճարների գծով

- Ստանալ տնօրենների պարգևավճարների մանրամասն բացվածքը և ստուգել դրա թվաբանական ճշտությունը՝ դրա ճշգրտությունն ապահովելու համար: Գումարը համադրել ֆինանսական հաշվետվություններում բացահայտված գումարի հետ:
- Վերանայել ընթացիկ պարտավորությունների բացվածքը և հաստատել, որ պարգևավճարի հաշվեգրումը ներառված է՝ որպես տարեվերջի պարտավորություն:
- Առանձին պարգևավճարները համադրել տարեվերջից հետո աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի հետ:
- Վերահաշվարկել պարգևավճարները և դրանց հաշվարկման չափանիշները համադրել հիմնավորող փաստաթղթերի, իսկ վճարման ենթակա տոկոսադրույքները՝ տնօրենների ծառայությունների մատուցման պայմանագրերի հետ:
- Հաստատել վճարված յուրաքանչյուր պարգևավճարի գումարը՝ համադրելով տարեվերջից հետո բանկային քաղվածքների հետ:
- Պարգևավճարի հաշվարկում օգտագործված «շահույթ մինչև շահութահարկով հարկումը» ցուցանիշը համեմատել վերջնական «շահույթ մինչև շահութահարկով հարկումը» ցուցանիշի հետ՝ հաստատելու համար, թե արդյոք անհրաժեշտ է որևէ ճշգրտում վճարված պարգևավճարի գծով, և ցանկացած տարբերություն քննարկել ղեկավարության հետ:
- Յուրաքանչյուր տնօրենին վճարված գումարները համադրել խորհրդի (տնօրենների խորհրդի) նիստերի արձանագրությունների և պայմանագրերի հետ՝ համոզվելու համար, որ ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարները ամբողջությամբ հաշվեգրված և բացահայտված են:
- Վերանայել խորհրդի նիստերի արձանագրությունները՝ պարզելու համար, թե արդյոք որևէ տնօրենի համար համաձայնեցվել են ընթացիկ տարվան վերաբերող լրացուցիչ վճարումներ:
- Ղեկավարությունից ստանալ գրավոր հավաստում, որով հաստատվում է տնօրենների վարձատրության, ներառյալ՝ պարգևավճարների ամբողջականությունը:
- Վերանայել տնօրեններին վճարված պարգևավճարների վերաբերյալ կատարված բացահայտումները և գնահատել, թե արդյոք դրանք համապատասխանում են ՖՀՄՍ և օրենսդրության պահանջներին:

Դ) Պաշտպանական միջոցներ

- Թե՛ «Հուսալի շինարար» ՍՊԸ-ն, թե՛ նրա մրցակիցը պետք է տեղեկացվեն այն մասին, որ «Մուռանո»-ն հանդիսանալու է երկու ընկերությունների աուդիտորը, և յուրաքանչյուր ընկերության ղեկավարությունից պետք է ստացվի համաձայնություն:
- «Մուռանո»-ն պետք է ապահովի առանձին աուդիտորական թիմերի նշանակումը՝ յուրաքանչյուր հաճախորդի համար տարբեր առաջադրանքի պատասխանատու գործընկերներով և թիմի անդամներով: Եթե աշխատակիցն արդեն աշխատել է

աուդիտներից մեկի վրա, ապա որոշակի ժամանակահատվածով նրան պետք է արգելվի մասնակցել մրցակցի աուդիտին (ռոտացիայի սկզբունք):

- Աուդիտորական ընկերության ներսում պետք է գործեն համարժեք ընթացակարգեր՝ տեղեկատվության հասանելիությունը կանխելու համար, օրինակ՝ երկու թիմերի խիստ ֆիզիկական առանձնացում (տարբեր աշխատասենյակներ կամ հարկեր), տվյալների գաղտնի և անվտանգ արխիվացում (թղթային և էլեկտրոնային ֆայլերի հասանելիության սահմանափակում):
- «Մուռանո»-ն պետք է հստակ ուղեցույցներ սահմանի յուրաքանչյուր աուդիտորական թիմի անդամների համար՝ անվտանգության և գաղտնիության հարցերի վերաբերյալ: Այս ուղեցույցները կարող են ներառվել յուրաքանչյուր հաճախորդին ուղարկվող աուդիտորական առաջադրանքի նամակ-պարտավորագրերում:
- «Մուռանո»-ն պետք է դիտարկի «Հուսալի շինարար» ՍՊԸ-ի և մրցակցի աուդիտորական թիմերի բոլոր անդամների կողմից գաղտնիության անհատական պահպանման համաձայնագրերի ստորագրման հնարավորությունը:
- Կատարված աշխատանքը պետք է վերանայվի համապատասխան անկախ վերանայողի կողմից, ով ներգրավված չէ տվյալ աուդիտում, որպեսզի գնահատվի, թե արդյոք հիմնական դատողությունները և եզրակացությունները պատշաճ են (որակի անկախ վերանայում):
- Վերոնշյալ պաշտպանական միջոցների կիրառման պարբերական մոնիտորինգը պետք է իրականացվի «Մուռանո»-ի ավագ աշխատակցի (ղեկավարի) կողմից, ով ներգրավված չէ ոչ մի աուդիտում:

Խնդիր 2

Միավորների բաշխման ուղեցույց

ա) Ներքին վերահսկողության թերությունների էական լինելու որոշում

- 1-ական միավոր՝ յուրաքանչյուր լավ բացատրված կետի համար — 4 միավոր

Առավելագույնը — 4 միավոր

բ) Ուղղակի վերահսկողություններ և վերահսկողության թեստեր

- Նոր համակարգի թեստավորում — 2 միավոր
- Վարկունակության ստուգում — 2 միավոր
- Ժամկետայնության հաշվետվության վերանայում — 2 միավոր
- Հաշվի համադրումներ — 2 միավոր
- Այլ (Other) — 2 միավոր

Առավելագույնը — 6 միավոր (Նշում. պահանջվում էր ընդամենը 3 զույգ վերահսկողություն + թեստ)

գ) Վերահսկողության թերություններ և առաջարկություններ (Առավելագույնը 5 խնդիր, յուրաքանչյուրը՝ 2 միավոր — 1 միավոր թերության բացատրության և 1 միավոր առաջարկության համար)

- Նոր աշխատակիցների ձևաթղթերի բացակայություն — 2 միավոր
- Արտաժամյա աշխատանքի եռամսյակային վերանայում — 2 միավոր
- Հաշվարկների չստուգում — 2 միավոր
- Պարզևավճարներ — 2 միավոր
- Մուտքային սխալներ — 2 միավոր
- Օնլայն-բանկինգ / գաղտնաբառեր — 2 միավոր
- Համադրվող հոդվածների ընտրողական ստուգում — 2 միավոր
- Այլ — 2 միավոր

Առավելագույնը — 10 միավոր

ա) Ներքին վերահսկողության թերությունների որոշում

ԱՄՍ 265 «Ներքին վերահսկողության թերությունների մասին տեղեկացումը կառավարման օղակներում գտնվող անձանց և ղեկավարությանը» ստանդարտը մանրամասնում է այն հանգամանքները, որոնք արտաքին աուդիտորը պետք է հաշվի առնի՝ որոշելու համար, թե արդյոք ներքին վերահսկողության թերությունը հանդիսանում է էական, ներառյալ՝

- Թերության (կամ թերությունների) պատճառով ապագայում ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առաջացման հավանականությունը:
- Համապատասխան ակտիվի կամ պարտավորության զգայունությունը կորստի կամ զեղծարարության նկատմամբ:
- Գնահատված գումարների որոշման սուբյեկտիվությունը և բարդությունը:
- Թերությունների ազդեցությանը ենթարկված գումարների մեծությունը:
- Գործառնությունների այն ծավալը, որը տեղի է ունեցել կամ կարող էր տեղի ունենալ թերության կամ թերությունների ազդեցությանը ենթարկված հաշվի մնացորդում կամ գործարքների դասում:
- Բացահայտված թերի վերահսկողական ընթացակարգերի կարևորությունը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացում:
- Վերահսկողության թերությունների արդյունքում հայտնաբերված բացառությունների (շեղումների) պատճառը և հաճախականությունը:
- Տվյալ թերության փոխազդեցությունը ներքին վերահսկողության այլ թերությունների հետ:

(բ) Ուղղակի վերահսկողություններ և վերահսկողության թեստեր

Ուղղակի վերահսկողություն

Վերահսկողության թեստ

Վաճառքի նոր համակարգը ամբողջությամբ թեստավորվել է նախքան դրա ներդրումը, և նոր ու հին համակարգերը զուգահեռաբար աշխատեցվում են մինչև տարեվերջ, ընդ որում՝ ներքին աուդիտն իրականացնում է արդյունքների ստուգումներ և հետամուտ է լինում ցանկացած անհամապատասխանության շտկմանը: Սա նվազեցնում է տվյալների կորստի կամ տվյալների ոչ ճիշտ մշակման ռիսկը, եթե առաջանան նոր համակարգի գործառնության հետ կապված խնդիրներ: Սա նաև նվազեցնում է մշակման սխալների և հաշվապահական գրառումներում խեղաթյուրումների ռիսկը:

Աուդիտորական թիմը պետք է վերանայի իրականացված թեստավորմանը վերաբերող ընթացակարգերն ու փաստաթղթերը և հավաստիանա, որ կատարված թեստերը համապատասխան են, և բոլոր սխալները ամբողջությամբ հետաքննվել ու լուծվել են:

Աուդիտորական թիմը պետք է վերանայի ներքին աուդիտի թեստավորման ժամանակացույցը՝ հասկանալու համար, թե ինչ ստուգումներ են իրականացվում և երբ է նախատեսվում դրանց ավարտը:

Ներքին աուդիտի արդեն ավարտված ստուգումների մասով աուդիտորական թիմը պետք է ձեռք բերի և վերանայի այն փաստաթղթերը, որոնք մանրամասնում են իրականացված թեստերը և ցանկացած հետագա գործողություն՝ հաստատելու համար, որ թեստերը համապատասխան են, և հասկանալու համար, թե ինչպես են հաղորդակցվել ու լուծվել սխալներն ու անհամապատասխանությունները:

Համակարգ մուտքագրվող նոր գործարքի դեպքում աուդիտորական թիմը պետք է դիտարկի գործարքի գրանցման ընթացքը հին և նոր համակարգերում և հավաստիանա, որ տեղեկատվությունը մշակվում է, և արդյունքը գեներացվում է միևնույն ձևով երկու համակարգերի միջև:

Նոր հաճախորդները անցնում են ամբողջական վարկունակության ստուգում, և վարկային սահմանաչափը սահմանվում է ավտոմատացված համակարգի միջոցով: Վարկային սահմանաչափը հաստատվում է վաճառքի տնօրենի կողմից, ով հավաստում է իր վերանայումը: Վարկունակության ստուգման պահանջը նվազեցնում է կորսված հասույթի և անհավաքագրելի առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկը, քանի որ միայն վարկունակ հաճախորդներն են ի վիճակի պատվերներ տեղադրել:

Ավտոմատացված գործընթացը պետք է ապահովի, որ որևէ կողմնակալություն չներառվի վարկունակ հաճախորդների ընդունման կամ վարկային սահմանաչափի սահմանման հարցում, ինչն օգնում է երաշխավորել, որ սահմանված վարկային սահմանաչափը պատշաճ է, իսկ դեբիտորական պարտքերը՝ հավաքագրելի: Վաճառքի տնօրենի վերանայումն օգնում է ապահովել, որ ավտոմատացված վարկային սահմանաչափի ցանկացած շեղում կամ անհամապատասխանություն բացահայտվի և հասցեագրվի նախքան պատվերների տեղադրումը:

Աուդիտորական թիմը պետք է ընտրի ժամանակաշրջանում բացված նոր հաճախորդների հաշիվների ընտրանք և համակարգում առկա տեղեկատվության հիման վրա հաստատի, որ վարկունակության ստուգումն իրականացվել է:

Նրանք նաև պետք է հավաստիանան, որ առկա է վաճառքի տնօրենի կողմից հաստատման ապացույց (օրինակ՝ ստորագրություն կամ էլեկտրոնային հաստատում)՝ նախքան վարկային սահմանաչափի սահմանումը:

Նոր հաճախորդների ընտրանքի համար աուդիտորական թիմը պետք է ձեռք բերի հաճախորդի կողմից տեղադրված առաջին պատվերի պատճենը և հավաստիանա, որ առաջին պատվերի ամսաթիվը հաջորդել է վարկունակության ստուգման ավարտի ամսաթվին:

Դեբիտորական պարտքերի ժամկետայնության ցուցակի պարբերական վերանայումը և վարկային վերահսկողության բաժնի կողմից իրականացվող հետագա քայլերը պետք է ապահովեն պարտքերի ժամանակին հավաքագրումը, ինչը նվազեցնում է անհավաքագրելի պարտքերի ռիսկը: Այն նաև պետք է ապահովի, որ մնացորդները պատշաճ կերպով նույնականացվեն որպես անհավաքագրելի և համապատասխանաբար արտացոլվեն հաշվառման մեջ:

Աուդիտորական թիմը պետք է ձեռք բերի ներբեռնված դեբիտորական պարտքերի ժամկետայնության հաշվետվության պատճենը և հաստատի, որ առկա է դեբիտորական պարտքերի գրքի գործավարի կողմից վերանայման ապացույց (օրինակ՝ ստորագրություն կամ էլեկտրոնային հաստատում): Աուդիտորական թիմը պետք է հարցումներ կատարի այն մասին, թե դեբիտորական պարտքերի որ մնացորդներն են փոխանցվում վարկային վերահսկողության բաժին, և պետք է հաստատի, որ դա համապատասխանում է ընկերության վարկային վերահսկողության քաղաքականությանը: Աուդիտորական թիմը պետք է վերանայի վարկային վերահսկողության բաժնի կողմից իրականացված հետագա քայլերի փաստաթղթերի ընտրանքը՝ ձեռնարկված գործողությունները հաստատելու համար:

Հաշվապահին ամսական կտրվածքով իրականացնում է դեբիտորական պարտքերի սինթետիկ և անալիտիկ հաշիվների համադրում և ժամանակին ուղղում է սխալները: Համադրումը վերանայվում և հաստատվում է ֆինանսական վերահսկիչի կողմից:

Դեբիտորական պարտքերի օժանդակ գրքի և դեբիտորական պարտքերի հաշվի պարբերական համադրումն օգնում է ապահովել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դեբիտորական պարտքերի մնացորդի ճշգրտությունը: Սխալների ժամանակին բացահայտումն ու ուղղումը երաշխավորում են գրանցման հետ կապված խնդիրների լուծումը և հաշվապահական գրառումների ճշգրտությունը: Ֆինանսական վերահսկիչի կողմից իրականացվող վերանայումն օգնում է ապահովել համադրման ճշգրտությունը:

Աուդիտորական թիմը պետք է վերանայի դեբիտորական պարտքերի վերահսկիչ հաշվի համադրումների թղթապանակը և հաստատի, որ դրանք իրականացվում են ամսական կտրվածքով:

Համադրվող հոդվածներ (տարբերություններ) պարունակող համադրումների ընտրանքի համար անհրաժեշտ է կատարել հետազոտում դեպի հիմնավորող փաստաթղթեր՝ համոզվելու համար, որ սխալներն ուղղվել են:

Թիմը նաև պետք է ստուգի ստորագրության կամ էլեկտրոնային հաստատման առկայությունը համադրումների վրա՝ որպես ֆինանսական վերահսկիչի կողմից վերանայման և հաստատման ապացույց:

Գ)

Վերահսկողության թերություն	Վերահսկողության առաջարկություն
Նոր աշխատակիցների ձևաթղթերի բացակայություն Երբ կարճ ժամկետում լրացուցիչ անձնակազմ է պահանջվում, նոր աշխատակիցների ընդունման ձևաթղթերը չեն լրացվում: Դրա փոխարեն, նրանք ավելացվում են աշխատավարձի հաշվարկման համակարգում արտադրության հսկողի էլեկտրոնային փոստի ծանուցման հիման վրա: Արտադրության հսկողը կարող է էլեկտրոնային նամակում չներառել բոլոր	Ընդունման ձևաթուղթը պետք է լրացվի բոլոր նոր աշխատակիցների համար՝ անկախ նրանից նրանք ժամանակավոր են, թե մշտական: Հաստատված ընդունման ձևաթուղթն այնուհետև պետք է ուղարկվի աշխատավարձի բաժին աշխատակցի կողմից աշխատանքը սկսելու օրը: Աշխատավարձի բաժինը պետք է ստորագրի ձևաթուղթը՝ որպես կատարված գործողության հավաստում: Աշխատավարձի բաժինը չպետք է գրանցի նոր աշխատակիցների՝ առանց

Վերահսկողության թերություն	Վերահսկողության առաջարկություն
անհրաժեշտ մանրամասները: Սա կարող է հանգեցնել նրան, որ ժամանակավոր աշխատակիցները ստանան ոչ ճշգրիտ աշխատավարձ կամ չստանան այն ժամանակին, ինչը կհանգեցնի աշխատակիցների վստահության կորստին: Առանց մարդկային ռեսուրսների բաժնի թույլտվության աշխատակիցներին աշխատավարձի համակարգում ավելացնելը նաև մեծացնում է կեղծ կամ գոյություն չունեցող անձանց համակարգ մուտքագրելու ռիսկը:	հաստատված ընդունման ձևաթղթի առկայության:
Արտաժամյա աշխատանքի ոչ ժամանակին վերանայում Աշխատակիցներին արտաժամյա աշխատանքի վարձատրությունը վճարվում է ամսական կտրվածքով, սակայն արտաժամյա աշխատանքի հաշվետվությունները վերանայվում են միայն յուրաքանչյուր եռամսյակը մեկ՝ արտաժամյա աշխատավարձի վճարումից հետո: Արտաժամյա աշխատանքի հաշվետվությունների եռամսյակային վերանայումը այն բանից հետո, երբ աշխատակիցներն արդեն վճարվել են, չափազանց հազվադեպ է: Սա կարող է հանգեցնել նրան, որ աշխատակիցներին վճարվի չաշխատած ժամերի համար՝ այդպիսով ավելացնելով ընկերության ծախսերը, կամ չվճարվի բավարար արտաժամյա աշխատավարձ, ինչը կարող է հանգեցնել աշխատակիցների վստահության կորստի:	Արտադրության հսկողը պետք է վերանայի և հաստատի արտաժամյա աշխատանքի հաշվետվությունները նախքան դրանք մշակման նպատակով աշխատավարձի բաժին փոխանցելը: Սա կապահովի արտաժամյա աշխատանքի ճիշտ չվճարումը համապատասխան աշխատակիցներին: Աշխատավարձի բաժնին պետք է հրահանգվի չմշակել արտաժամյա աշխատանքի որևէ հաշվետվություն, որը չի վերանայվել և չի հաստատվել արտադրության վերահսկիչի կողմից:
Աշխատավարձի հաշվարկների չստուգվելը	Աշխատակիցների ընտրանքի համար աշխատավարձի բաժնի ավագ անդամը

Վերահսկողության թերություն	Վերահսկողության առաջարկություն
Աշխատավարձերի և պահումների հաշվարկներն ավտոմատ կերպով իրականացվում են աշխատավարձի հաշվարկման համակարգի կողմից, սակայն ոչ մի ստուգում չի կատարվում՝ հաստատելու համար այդ հաշվարկների ճշգրտությունը: Ռիսկ կա, որ համակարգային ցանկացած սխալ, որը տեղի է ունենում աշխատավարձի մշակման ժամանակ, չի բացահայտվի: Սա կարող է հանգեցնել աշխատավարձերի ավել կամ պակաս հաշվարկմանը՝ հանգեցնելով աշխատավարձի հավելյալ ծախսերի կամ աշխատակիցների ու վստահության կորստի: Բացի այդ, օրենսդրական պահումները կարող են ավել կամ պակաս վճարվել՝ առաջացնելով պետական կարգավորումների հետ համապատասխանության խնդիրներ:	պետք է անձամբ վերահաշվարկի համախառն աշխատավարձից զուտ աշխատավարձի անցման հաշվարկները և համեմատի իր ստացած արդյունքները աշխատավարձի համակարգի գներացրած տվյալների հետ: Ցանկացած անհամապատասխանություն պետք է մանրամասն հետաքննվի: Այս վերահաշվարկների թերթիկները պետք է ստորագրվեն որպես հաստատված՝ նախքան վերջնական վճարումներ կատարելը:
Բոնուսների անհատական և չվերահսկվող սահմանում Մարդկային ռեսուրսների կառավարիչը բոնուսների վերաբերյալ որոշումները կայացնում է՝ հիմնվելով աշխատակիցների կատարողականի վրա, և հաստատված բոնուսների մասին տեղեկացնում է աշխատավարձի բաժնին: Բոնուսների չափի համար չկան հաստատված սահմանաչափեր կամ չափանիշներ, ուստի այն հիմնված է զուտ մեկ անձի հայեցողության վրա: Սա կարող է հանգեցնել բոնուսների անպատշաճ վճարմանը՝ առաջացնելով հավելյալ ծախսեր կամ աշխատակիցների բարյացակամության ու վստահության կորուստ: Բոնուսները մուտքագրվել են համակարգ, և դրանից հետո մի շարք աշխատակիցներ աշխատավարձի բաժնին հայտնել են իրենց վարձատրության մեջ առկա սխալների	Բոնուսների վճարումները պետք է որոշվեն հստակ սահմանված ու փաստաթղթավորված չափանիշներին համապատասխան և հաստատվեն տնօրենների խորհրդի կողմից: Մարդկային ռեսուրսների տնօրենը կամ մեկ այլ պատասխանատու պաշտոնատար անձ աշխատավարձի բաժնին պետք է տրամադրի յուրաքանչյուր աշխատակցի համար հաստատված բոնուսների մանրամասն ցուցակը: Աշխատավարձի բաժնին պետք է իրահանգվի բոնուսի վճարում կամ որևէ այլ փոփոխություն կատարել միայն տնօրենների խորհրդի կողմից հաստատված գրավոր թույլտվության ստացման դեպքում: Մուտքագրված բոնուսները պետք է վերանայվեն՝ հավաստիանալու համար, որ դրանք համապատասխանում են մարդկային ռեսուրսների բաժնի տրամադրած

Վերահսկողության թերություն	Վերահսկողության առաջարկություն
մասին: Ըստ ամենայնի, բոնուսները մուտքագրվել են առանց որևէ լրացուցիչ վերանայման, ինչը մեծացնում է սխալների առաջացման ռիսկը աշխատավարձի հաշվարկման գործընթացում: Բացի այդ, բոնուսների հետ կապված խնդիրները հետաքննվել են միայն այն աշխատակիցների մասով, ովքեր բողոքել են, որ իրենց բոնուսը սխալ է հաշվարկվել: Ավելի հավանական է, որ բողոքներ ներկայացնեն պակաս վճարված աշխատակիցները, հետևաբար ռիսկ կա, որ մյուս աշխատակիցներին հաշվարկվել են ավել գումարներ, ինչն էլ իր հերթին մեծացնում է ընկերության աշխատավարձի գծով ընդհանուր ծախսերը:	փաստաթղթերին: Բոնուսները պետք է համակարգ մուտքագրվեն մեկ գործավարի կողմից և ստուգվեն աշխատավարձի բաժնի երկրորդ գործավարի կողմից՝ սխալները բացառելու համար: Աշխատավարձերի համակարգում կատարված ցանկացած փոփոխություն պետք է ավտոմատ կերպով գեներացնի շեղումների հաշվետվություն, որն այնուհետև պետք է վավերացվի աշխատավարձի բաժնի ավագ անդամի կողմից:
Օնլայն-բանկինգի տվյալների անպաշտպան պահպանում Օնլայն-բանկինգի մուտքային տվյալները պահպանվում են կենտրոնացված վայրում, որը հասանելի է կրեդիտորական պարտքերի հաշվառման ողջ անձնակազմին: Գոյություն ունի ռիսկ, որ անձնակազմը կարող է զեղծարարությամբ գրանցել նոր վճարվող անձանց կամ բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրումներ կատարել, ինչը հանգեցնում է դրամական միջոցների յուրացման պատճառով կորուստների առաջացման բարձր ռիսկի:	Օնլայն-բանկինգի մուտքային տվյալները չպետք է գրավոր ֆիքսվեն կամ փաստաթղթավորվեն և պետք է հայտնի լինեն միայն համապատասխան լիազորություններ ունեցող ընտրված աշխատակիցներին: Վճարվող անձանց տվյալներում կատարված ցանկացած փոփոխություն պետք է արտացոլվի փոփոխությունների հաշվետվության մեջ, որը ներբեռնվում է ինտերնետ-բանկինգի համակարգից և պարբերաբար վերանայվում ֆինանսական տնօրենի կողմից՝ ստուգելու համար, որ կատարված փոփոխությունները համապատասխան անձի կողմից հաստատված են:
Համադրվող հոդվածների ընտրողական հետաքննություն Բանկային հաշվի համադրման հաշվետվության մեջ առկա համադրվող հոդվածները ներքին հսկողի կողմից գննվում	Համադրվող հոդվածները պետք է վերանայվեն ներքին հսկողի կողմից շաբաթական կտրվածքով՝ անկախ դրանց էականության աստիճանից: Ներքին հսկողը պետք է հավաստի իր իրականացրած

Վերահսկողության թերություն	Վերահսկողության առաջարկություն
Են միայն այն դեպքում, եթե այդ հոդվածների հանրագումարը էական է: Բանկային համադրումները կարող են պարունակել էական սխալներ, նույնիսկ եթե համադրվող հոդվածների ընդհանուր մնացորդը փոքր է, քանի որ կարող են գոյություն ունենալ փոխհատուցող սխալներ, որոնք չեզոքացնում (մարում) են միմյանց: Եթե համադրվող հոդվածները չեն վերանայվում, դա նվազեցնում է բանկային համադրումների արդյունավետությունը և հանգեցնում է վստահության պակասի առ այն, որ բանկային համադրումները պատշաճ կերպով են իրականացվում:	վերանայում՝ ստորագրելով բանկային հաշվի համադրման հաշվետվությունը:

Խնդիր 3

Գնահատման ուղեցույց — Միավորներ

ա) Մինչև 1 միավոր յուրաքանչյուր լավ բացատրված թերության համար և մինչև 1 միավոր յուրաքանչյուր առաջարկության համար. եթե լավ բացատրված չեն, ապա $\frac{1}{2}$ միավոր յուրաքանչյուրի համար:

- Պահեստի մենեջերի կողմից գույքագրման վերահսկում — 1
- Պարտականությունների բաժանման բացակայություն յուրաքանչյուր հաշվառող թիմի ներսում — 1
- Ներքին աուդիտի թիմերը պետք է ստուգեն վերահսկողության մեխանիզմները և իրականացնեն ընտրանքային հաշվառումներ — 1
- Անցումների (շարքերի) նշումների բացակայություն հաշվառման ավարտից հետո — 1
- Լրացուցիչ պաշարների գրանցում հաջորդականորեն չհամարակալված թերթիկների վրա — 1
- Գույքագրման թերթիկների չստորագրումը հաշվառողների կողմից — 1
- Վնասված ապրանքների չտեղափոխումը կենտրոնական վայր — 1
- Պաշարների շարժը գույքագրման ընթացքում — 1
- Պահեստի մենեջերը որակավորված չէ անավարտ արտադրության մակարդակը գնահատելու համար — 1
- Պահեստի մենեջերը չունի բավարար փորձ հումքի քանակները գնահատելու համար — 1

Առավելագույնը — 12 միավոր

բ) Մինչև 1 միավոր յուրաքանչյուր լավ նկարագրված ընթացակարգի համար:

- Դիտարկել հաշվառողներին՝ համոզվելու համար, որ պաշարների գույքագրման հրահանգները պահպանվում են — 1
- Իրականացնել ստուգիչ հաշվառումներ՝ պաշարից դեպի թերթիկներ և թերթիկներից դեպի պաշար ուղղություններով — 1
- Հաստատել, որ վնասված ապրանքների համար նախատեսված ընթացակարգերը գործում են պատշաճ կերպով — 1
- Զննել վնասված ապրանքները՝ համոզվելու համար, որ վնասվածության աստիճանը ճիշտ է նշված — 1
- Դիտարկել պաշարների շարժի համար իրականացվող ընթացակարգերը գույքագրման ընթացքում — 1
- Ստանալ լրացված գույքագրման թերթիկների լուսապատճենը — 1

- Նույնականացնել և նշում կատարել վերջին մուտքի օրդերների և բեռնագրերի վերաբերյալ — 1
- Դիտարկել անավարտ արտադրության մակարդակի գնահատման համար պահեստի մենեջերի կողմից իրականացվող ընթացակարգերը — 1
- Քննարկել պահեստի մենեջերի հետ, թե ինչպես է նա գնահատել հումքի քանակները — 1
- Նույնականացնել երրորդ անձանց պատկանող պաշարները և համոզվել, որ դրանք դուրս են թողնվել գույքագրումից — 1

Առավելագույնը — 6 միավոր

գ)

(i) Մինչև 1 միավոր յուրաքանչյուր լավ նկարագրված ընթացակարգի համար, առավելագույնը 4 ընթացակարգ

- Հաշվարկել պաշարների պահման ժամանակաշրջանը — 1
- Պատրաստել պաշարների ժամկետայնության վերլուծություն՝ դանդաղ շարժվող ապրանքները բացահայտելու համար — 1
- Ստուգել պաշարների ցուցակի թվաբանական ճշտությունը (վերահաշվարկել հանրագումարները) — 1
- Ընտրել հոդվածների ընտրանք՝ իրացման զուտ արժեքը և/կամ ինքնարժեքը հաստատելու համար — 1
- Վերահաշվարկել ինքնարժեքը և իրացման զուտ արժեքը պաշարների ընտրանքի համար — 1
- Ավտոմատացված գործիքները և տեխնիկաները կարող են օգտագործվել սահմանագծումը հաստատելու համար — 1
- Ավտոմատացված գործիքները և տեխնիկաները կարող են օգտագործվել հաստատելու համար, թե արդյոք գույքագրման ընթացքում արձանագրված պաշարների ճշգրտումները թարմացվել են պաշարների հաշվառման գրանցամատյաններում — 1

Առավելագույնը — 4 միավոր

(ii) Մինչև 1 միավոր յուրաքանչյուր լավ բացատրված առավելության համար

- Ճշգրտորեն և արագ ստուգել պաշարների վերաբերյալ մեծածավալ տվյալներ — 1
- Ծախսարդյունավետություն ներդրումից (նախնական կարգավորումից) հետո — 1
- Ավտոմատացված գործիքները և տեխնիկաները կարող են ստուգել ինչպես ծրագրային վերահսկողության, այնպես էլ SS ընդհանուր վերահսկողության մեխանիզմները — 1

- Ստուգել բուն պաշարների համակարգը և գրառումները, այլ ոչ թե համակարգից ստացված տպագիր քաղվածքները — 1
- Ավտոմատացված գործիքները և տեխնիկաները նվազեցնում են մարդկային սխալի մակարդակը թեստավորման ընթացքում — 1
- Ավտոմատացված գործիքների և տեխնիկաների արդյունքները կարող են համեմատվել ավանդական աուդիտորական ստուգումների հետ — 1
- Ազատել աուդիտորական թիմի անդամների ժամանակը՝ կենտրոնանալու մասնագիտական դատողություն պահանջող և բարձր ռիսկային գոտիների վրա — 1

Առավելագույնը — 4 միավոր

(iii) Մինչև 1 միավոր յուրաքանչյուր լավ բացատրված թերության համար

- Առաջին տարում ավտոմատացված գործիքների և տեխնիկաների կիրառման ծախսերը բարձր կլինեն — 1
- Թիմից կարող է պահանջվել վերապատրաստում կիրառվելիք կոնկրետ ավտոմատացված գործիքների և տեխնիկաների գծով — 1
- Պաշարների համակարգում կատարված փոփոխությունները կարող են պահանջել ավտոմատացված գործիքների և տեխնիկաների ծախսատար վերանայումներ (լրամշակումներ) — 1
- Պաշարների համակարգը կարող է համատեղելի չլինել աուդիտորական ֆիրմայի ավտոմատացված գործիքների և տեխնիկաների հետ — 1
- Գործող (իրական ժամանակում աշխատող) համակարգը թեստավորելիս գոյություն ունի տվյալների վնասման (աղավաղման) կամ կորստի ռիսկ — 1
- Իրական տվյալների փոխարեն պատճենված ֆայլեր օգտագործելու դեպքում գոյություն ունի ռիսկ, որ այդ ֆայլերը կարող են իրական պատճեններ չլինել — 1
- Համակարգերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայությունը պարտադիր է — 1

Առավելագույնը — 4 միավոր Ընդհանուր — 30 միավոր

ա) Թերություններ և առաջարկություններ

Թերություն	Առաջարկություն
Պահեստի մենեջերը վերահսկելու է պաշարների գույքագրումը այն դեպքում, երբ վերջինս անկախ չէ, քանի որ կրում է պաշարների հաշվառման ընդհանուր	Պետք է նշանակվի անկախ վերահսկող, օրինակ՝ ներքին աուդիտի բաժնի մենեջերը:

Թերություն	Առաջարկություն
պատասխանատվությունը: Հետևաբար, նա ունի շահագրգռվածություն թաքցնելու կամ չզեկուցելու ցանկացած խնդիր, որը կարող է բացասաբար անդրադառնալ իր աշխատանքի գնահատականի վրա:	
Հաշվառված շարքերը կամ տարածքները չեն նշագրվելու: Սա կարող է հանգեցնել ապրանքների կրկնակի հաշվառման կամ ընդհանրապես բացթողման:	Տարածքները հաշվառվելուց անմիջապես հետո դրանք պետք է նշագրվեն: Հաշվառման ավարտին վերահսկողը պետք է ստուգի՝ արդյոք բոլոր տարածքները նշված են և, հետևաբար, հաշվառված:
Գոյություն չունի անկախ անձ, որը կվերահսկի հաշվառման նկատմամբ հսկողական մեխանիզմները կամ կիրականացնի ստուգիչ հաշվառումներ՝ հաշվարկների ճշգրտությունը գնահատելու համար:	Ներքին աուդիտորներն պետք է իրականացնեն երկրորդային ստուգիչ հաշվառումներ , որպես անկախ վերստուգողներ, և վերանայեն հաշվառման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները:
Վնասված ապրանքները թողնվում են իրենց տեղերում, այլ ոչ թե պահվում են առանձին: Սա ֆինանսական բաժնի համար դժվարացնում է ապրանքների վնասվածության աստիճանի գնահատումը և անհրաժեշտ արժեզրկման (դուրսգրման) չափի սահմանումը: Բացի այդ, եթե դրանք չտեղափոխվեն, վնասված ապրանքները կարող են պատահաբար վաճառվել:	Վնասված ապրանքները հաշվառման ընթացքում պետք է հստակ նշվեն որպես այդպիսին, իսկ հաշվառման ավարտին դրանք պետք է տեղափոխվեն կենտրոնական վայր: Այնուհետև ֆինանսական թիմի մենեջերը պետք է զննի այդ վնասված ապրանքները՝ անհրաժեշտ պահուստի կամ արժեզրկման (դուրսգրման) մակարդակը գնահատելու համար:

Թերություն	Առաջարկություն
Արտադրական անընդմեջ գործընթացի պատճառով գույքագրման ընթացքում տեղի է ունենալու ապրանքների շարժ դեպի պահեստ և պահեստից դուրս, ինչը մեծացնում է կրկնակի հաշվարկի կամ պաշարները հաշվառելուց բաց թողնելու ռիսկը: Սա կարող է հանգեցնել ֆինանսական հաշվետվություններում պաշարների մնացորդի թերագնահատմանը կամ գերագնահատմանը:	Թեև արտադրական գործընթացը ընդհատելը գործնականում անհնար է, հուլիսի 31-ի համար անհրաժեշտ հումքի ծավալը պետք է գնահատվի և առանձնացվի մնացած պաշարներից: Այս նյութերը պետք է ներառվեն որպես անավարտ արտադրության մաս: Հուլիսի 31-ին արտադրված ապրանքները պետք է պահվեն առանձին, իսկ գույքագրման ավարտին դրանք պետք է գույքագրվեն մեկ անգամ և ներառվեն պատրաստի արտադրանքի կազմում:
Պահեստի մենեջերը պատրաստվում է գնահատել անավարտ արտադրանքի մակարդակը: Քիչ հավանական է, որ պահեստի մենեջերն ունենա անավարտ արտադրանքի մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ փորձ, ինչին արտադրամասի մենեջերն ավելի լավ կտիրապետեր: Որպես այլընտրանք, գնահատումը կատարելու համար կարող է պահանջվել մասնագետ: Սա ի վերջո կարող է հանգեցնել ֆինանսական հաշվետվություններում անավարտ արտադրանքի սխալ մնացորդի արտացոլմանը:	Անավարտ արտադրանքի ծավալները գնահատելու համար պետք է ներգրավվի անկախ մասնագետ (կամ գործընթացը հանձնարարվի արտադրամասի մենեջերին):
Պահեստի մենեջերը պատրաստվում է մոտարկել հումքի քանակները: Թեև նա ծանոթ է հումքին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ	Ինչպես նախորդ տարիներին, հումքի քանակները պետք է գնահատվեն մասնագետի կողմից, կամ առնվազն

Թերություն	Առաջարկություն
Նախկինում պահանջվել է մասնագետ, պահեստի մենեջերը կարող է չունենալ այս չափումներն իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ և փորձ: Սա կարող է հանգեցնել ֆինանսական հաշվետվություններում հումքի սխալ մնացորդի արտացոլմանը:	ստուգվեն պահեստի մենեջերի կողմից արված մոտարկումները՝ հավաստիանալու համար, որ մենեջերի գնահատականները հետագայում կլինեն ողջամիտ և հուսալի:
Ոչ մի նշում չկա այն մասին, որ գույքագրման թերթիկները ստորագրվում կամ վավերացվում են հաշվառող թիմի կողմից, և ոչ էլ գրառում է պահվում, թե որ թիմը որ տարածքն է հաշվառել: Սա նշանակում է, որ դժվար կլինի հետամուտ լինել հայտնաբերված ցանկացած շեղման, քանի որ գույքագրողների ինքնությունը կարող է անհայտ լինել:	Շարքը ավարտելուց հետո գույքագրման թերթիկները պետք է ստորագրվեն թիմի երկու անդամների կողմից: Վերահսկողը թերթիկները հանձնելիս պետք է ստուգի դրանց ստորագրված լինելը:
Այն պաշարները, որոնք ներառված չեն թերթիկներում, պետք է մուտքագրվեն առանձին թերթիկների վրա: Այս թերթիկները հաջորդականորեն համարակալված չեն, և վերահսկողը չի կարողանա ապահովել գույքագրման բոլոր թերթիկների ամբողջականությունը:	Յուրաքանչյուր թիմի պետք է տրվի դատարկ թերթիկ, որտեղ նրանք կարող են մուտքագրել ցանկացած հաշվառված պաշար, որը բացակայում է իրենց հիմնական թերթիկներից: Դատարկ թերթիկները պետք է լինեն հաջորդականորեն համարակալված, իսկ ցանկացած չօգտագործված թերթիկ պետք է վերադարձվի հաշվառման ավարտին: Այնուհետև վերահսկողը պետք է ստուգի բոլոր թերթիկների հաջորդականությունը:

Թերություն	Առաջարկություն
Գույքագրող թիմի երկու անդամներից յուրաքանչյուրի պարտականությունները հստակ չեն: Չի երևում, որ նրանցից մեկին հանձնարարված է հաշվառել, իսկ մյուսին՝ ստուգել: Հետևաբար, հաշվառման ընթացքում թույլ տրված սխալները կարող են չհայտնաբերվել:	Յուրաքանչյուր տարածքի համար թիմի անդամներից մեկին պետք է հանձնարարվի կատարել հաշվառումը, իսկ երկրորդ անդամին՝ ստուգել, որ պաշարները ճիշտ են հաշվառվել: Հաջորդ տարածքի համար նրանց դերերը կարող են փոխվել (ռոտացիա կիրառվել):

Նշում: 12 միավոր ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ընդամենը վեց թերություն և վեց համապատասխան առաջարկություն:

բ) Պաշարների գույքագրման ընթացքում իրականացվող ընթացակարգեր

- Պաշարների հոդվածների ընտրանքի համար իրականացնել ստուգիչ գույքագրումներ՝ շարքից դեպի գույքագրման թերթիկ ուղղությամբ՝ ամբողջականությունը ստուգելու համար, և գույքագրման թերթիկից դեպի անցում շարք ուղղությամբ՝ առկայությունը ստուգելու համար:
- Ստանալ և արձանագրել հուլիսի 31-ի դրությամբ վերջին մուտքի օրդերների և բեռնագրերի մանրամասները՝ աուդիտի ժամանակ զատման ընթացակարգերի համար հիմք ձևավորելու նպատակով:
- Դիտարկել՝ արդյոք հաշվառումն իրականացնող թիմերը պատշաճ կերպով հետևում են պաշարների գույքագրման հրահանգներին:
- Դիտարկել գույքագրման ընթացքում պաշարների շարժի համար կիրառվող ընթացակարգերը և գնահատել ռիսկը, որ հումքը կամ պատրաստի արտադրանքը կարող են բաց թողնվել կամ կրկնակի գույքագրվել:
- Լուսապատճենել լրացված գույքագրման թերթիկները՝ հետագա ստուգումների և վերջնական աուդիտի ժամանակ ընթացակարգեր իրականացնելիս օգտագործելու համար:
- Պարզել, թե ինչպես է պահեստի մենեջերը գնահատում անավարտ արտադրանքի մակարդակը՝ դիտարկելով գնահատման գործընթացը, վերանայելով նրա ենթադրությունները և դիտարկելով, թե որքանով է նրա գնահատականը համապատասխանում փաստացի տեսանելի մակարդակներին:

- Հարցնել պահեստի մենեջերին, թե ինչպես է նա գնահատել հումքի քանակները, և վերանայել նրա հաշվարկներն ու ցանկացած ենթադրություն՝ դրանց ողջամտությունը ստուգելու համար: Վերահաշվարկել բարձրության և լայնության չափումների ընտրանքը, որոնք հիմք են հանդիսացել հաշվարկի համար՝ պարզելու համար, թե արդյոք դրանք ճշգրիտ են:
- Հաստատել, որ դիտարկված ցանկացած երրորդ անձանց պատկանող պաշար դուրս է թողնվել գույքագրումից:
- Հաստատել, որ վնասված ապրանքների նույնականացման և առանձին պահման ընթացակարգերը գործում են արդյունավետ կերպով:

Նշում. Ամբողջ միավորները ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ընդամենը վեց ընթացակարգ:

գ) Ավտոմատացված գործիքներ և տեխնոլոգիաներ

(i) Աուդիտորական ընթացակարգեր

- Ծրագրային ապահովումը կարող է օգտագործվել պաշարների ցուցակի թվաքանական ճշտությունը ստուգելու համար՝ հաստատելու, որ ընդհանուր գումարը ամբողջական է և ճշգրիտ:
- Աուդիտորական ծրագիրը կարող է օգտագործվել պաշարների հոդվածների վիճակագրական ընտրանք արտահանելու համար՝ դրանց ինքնարժեքը կամ իրացման զուտ արժեքը (ԻՀԱ) ստուգելու նպատակով:
- Պաշարների պահման ժամանակաշրջանի կամ պաշարների շրջանառելիության հաշվարկները կարող են իրականացվել աուդիտորական ծրագրի միջոցով, որից հետո դրանք կարող են համեմատվել նախորդ տարվա կամ համադրելի տնտեսության ճյուղայի միջին նույն ցուցանիշների հետ: Սա կօգնի գնահատել պաշարների գերազնահատված լինելու ռիսկը:
- Աուդիտորական ծրագիրը կարող է օգտագործվել պաշարների ժամկետայնության վերլուծություն ստանալու համար: Սա իր հերթին կարող է օգտագործվել ցանկացած հնացած կամ դանդաղ շարժվող ապրանքների նույնականացման համար, որոնք կարող են պահանջել արժեզրկում կամ պահուստի ձևավորում:
- Աուդիտորական ծրագիրը կարող է օգտագործվել պաշարների թեստավորման ընթացքում հաշվարկներ իրականացնելու համար, ինչպիսիք են գրանցված ինքնարժեքի ճշտության ստուգումը (օրինակ՝ քաշը կամ քանակը բազմապատկած կիլոգրամի կամ միավորի ինքնարժեքով):
- Ավտոմատացված գործիքները կարող են օգտագործվել հաստատելու համար, թե արդյոք գույքագրմանը ներկա գտնվելու ժամանակ արձանագրված պաշարների ճշգրտումները ճիշտ են փոխանցվել և արտացոլվել պաշարների վերջնական

գրանցումներում, որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական հաշվետվություններում պաշարների մնացորդի համար:

- Ավտոմատացված գործիքները կարող են օգտագործվել զատումը ստուգելու համար՝ թեստավորելով, թե արդյոք արձանագրված վերջին մուտքի օրդերների և բեռնագրերի ամսաթվերը վերաբերում են մինչև տարեվերջյան ժամանակաշրջանին, և արդյոք տարեվերջից հետո ամսաթվով ցանկացած փաստաթուղթ պատշաճ կերպով դուրս է թողնվել պաշարների գրանցումներից:

Նշում. Պահանջվում է ներկայացնել ընդամենը չորս ընթացակարգ:

(ii) Ավտոմատացված գործիքներ — առավելություններ

Ավտոմատացված գործիքները թույլ են տալիս աուդիտորական թիմին ստուգել պաշարների վերաբերյալ մեծածավալ տվյալներ ավելի ճշգրիտ և արագ, քան ձեռքով ստուգելու դեպքում:

- Ավտոմատացված գործիքները նվազեցնում են մարդկային սխալի հավանականությունը թեստավորման ընթացքում և կարող են ապահովել ավելի բարձր որակի աուդիտորական ապացույցներ:
- Ավտոմատացված գործիքների կիրառմամբ աուդիտորները կարող են ստուգել պաշարների փաստացի գործարքները հենց համակարգի ներսում, այլ ոչ թե աշխատել քաղվածքների կամ ֆայլերի հետ, որոնք կախված են այլ ծրագրային ապահովումից (և, հետևաբար, կարող են պարունակել սխալներ կամ արտահանումից հետո ենթարկված լինել կամայական փոփոխությունների կամ կեղծումների):
- Ենթադրելով, որ պաշարների համակարգը կմնա անփոփոխ, տարեցտարի «Լևոնշին» ընկերության աուդիտում ավտոմատացված գործիքների կիրառումը երկարաժամկետ հեռանկարում պետք է ապահովի ժամանակի (և, հետևաբար, ծախսերի) խնայողություն, ինչը ավելին քան կփոխհատուցի ներդրման ցանկացած ծախս:
- Աուդիտորները կարող են օգտագործել ավտոմատացված գործիքներ՝ ստուգելու ինչպես ծրագրային վերահսկողության մեխանիզմները, այնպես էլ SS վերահսկողության հետ կապված ընդհանուր ներքին վերահսկողությունը:
- Ավտոմատացված գործիքների կիրառումից ստացված արդյունքները կարող են համեմատվել ավանդական թեստավորման արդյունքների հետ: Եթե արդյունքները համընկնում են, աուդիտի ընդհանուր վստահելիության մակարդակը մեծանում է:
- Ավտոմատացված գործիքների օգտագործումը աուդիտորական թիմի անդամներին ավելի շատ ժամանակ է տալիս կենտրոնանալու ռիսկային բնագավառների և մասնագիտական դատողություն պահանջող հարցերի վրա, այլ ոչ թե իրականացնելու հասարակ հաշվարկներ, որոնք կարող են հեշտությամբ կատարվել աուդիտորական ծրագրի միջոցով:

Նշում. Ամբողջական միավորներ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ընդամենը չորս առավելություն:

(iii) Ավտոմատացված գործիքներ — թերություններ

- Առաջին տարում ավտոմատացված գործիքների համար անհրաժեշտ ծրագրային ապահովման ներդրումը, ամենայն հավանականությամբ, կլինի ժամանակատար և ծախսատար:
- «Լևոնշին» ընկերության աուդիտի վրա աշխատող աուդիտորական անձնակազմը պետք է հատուկ վերապատրաստվի, որպեսզի ունենա SS գիտելիքների բավարար մակարդակ՝ պաշարների համակարգի աուդիտի ժամանակ ավտոմատացված գործիքներն արդյունավետորեն կիրառելու համար:
- Եթե թեստավորումն իրականացվում է պաշարների իրական ժամանակում աշխատող համակարգի տվյալների վրա, գոյություն ունի ռիսկ, որ հաճախորդի իրական տվյալները կարող են աղավաղվել կամ կորչել:
- Եթե «Լևոնշին» ընկերության պաշարների համակարգը փոփոխվի, ապա ավտոմատացված գործիքների լրամշակումը կարող է լինել ծախսատար և ժամանակատար:
- Եթե «Լևոնշին» ընկերության պաշարների համակարգը համատեղելի չէ «Դերվիշ» ընկերության ավտոմատացված գործիքների ծրագրային ապահովման հետ, ապա դրանք պետք է հարմարեցվեն «Լևոնշին» համակարգին, ինչը կարող է թանկ արժենալ:
- Եթե թեստավորումն իրականացվում է գործող ֆայլերի պատճենների տվյալների, այլ ոչ թե բուն իրական տվյալների վրա, գոյություն ունի ռիսկ, որ այդ ֆայլերը կարող են փոփոխված լինել պատճենման գործընթացի պատճառով կամ ենթարկված լինել կամայական միջամտության :
- Եթե համակարգերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր առկա չլինեն, ապա «Լևոնշին» պաշարների համակարգի ոչ բավարար ըմբռնման պատճառով դժվար կլինի նախագծել համապատասխան տեխնիկաներ:
- **Նշում.** Ամբողջական միավորներ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ընդամենը չորս թերություն:

Խնդիր 4

1. ա

2. բ

3. գ

4. դ

5. զ

Խնդիր 5

1. p

2. w

3. p

4. q

5. p